ՄՈՍԿՎԱ, ԿՐԵՄԼ

# ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԵԾ ԱՌԱՋՆՈՐԴ ԻՈՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻՉ ՍՏԱԼԻՆԻՆ

Թանկագի՛ն Իոսիֆ Վիսսարիոնովիչ.

Այսօր Սովետական Հայաստանում մեծ տոն է։ Հայաստանում Սովետական իշխանության հաստատվելու 23-րդ տարեդարձի օրը համընկավ Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Գիտությունների Ակադեմիայի բացման հետ։

Հայաստանի Գիտությունների Ակադեմիա կազմակերպելու լուրը հայկական ինտելիգենցիան, ամբողջ հայ ժողովուրդը ընդունեց խորը բերկրանքի զգացումով։ Ակադեմիայի ստեղծումը ժողովուրդը միահամուռ կերպով գնահատեց իբրև մի մեծ պատիվ, ցույց տրված իրեն, իր ինտելիգենցիային, իր կուլտուրային։

Ընդունելով Սովետական կառավարության, բոլշևիկյան պարտիայի այդ մեծ նվերը՝ հայկական ինտելիգենցիան իր հայացքը, իր առաջին խոսքերը ուղղում է դեպի Ձեզ՝ իր մեծ առաջնորդին ու բարեկամին և Ձեզ է բերում իր անհուն շնորհակալությունը այն ամենի համար, ինչ Դուք արել եք հայ ժողովրդի փրկության ու վերածնության համար, այն ամենի համար, ինչ Դուք անում եք նրա կուլտուրայի և գիտության զարգացման համար։

Եվ այս անմոռանալի օրը մենք, Հայաստանի գիտնականներս, հայկական ամբողջ ինտելիգենցիան, մեր ամբողջ ժողովուրդը խանդաղատանքի զգացումով մտքով վերադառնում ենք դեպի այն, թե ինչպես դեռևս 20-րդ դարի արշալույսին Դուք գլխավորեցիք հայ ժողովրդի ազատագրության համար մղվող պայքարը և Ձեզ հատուկ հաստատակամությամբ ավելի քան չորս տասնյակ տարիների ընթացքում պահպանելով հայ ժողովրդին՝ մերկացրիք բոլոր երանգների պոլիտիկաններին, որոնք շահարկում էին հայկական պրոբլեմով, իսկ իրոք ժողովրդին հրում իմպերիալիստական գիշատիչների լծի տակ։

Այդ պայքարում Դուք մաքրում էիք Ձեր նշած միակ ճիշտ ուղին, որը հասցրեց հայ ժողովրդի ազատագրությանն ու վերածննդին։

Ոչ մի հայ չի կարող մոռանալ 1920 ծանր թվականը, երբ նա՝ իմպերիալիստական գիշատիչների կողմից խաբված, կողոպտված, խոշտանգված, գտնվում էր կյանքի և մահվան եզրին։ Այն ժամանակ, այն օրհասական օրերին Դուք տվիք փրկության բանալին՝ նշելով, որ միմիայն Սովետական իշխանությունը փրկություն կբերի հայ ժողովրդին։

Մեր թանկագին և սիրելի ուսուցիչ։ Մենք գիտենք, որ խոսելով հայ ժողովրդի ֆիզիկական փրկության մասին՝ Դուք մտահոգված էիք ոչ միայն նրա կյանքը, այլև նրա բազմադարյան կուլտուրան փրկելով։ Մենք միշտ էլ տեսել ենք Ձեր անդուլ հոգատարությունը Հայաստանում գիտության ու արվեստի զարգացման մասին և այդ հոգատարության մեջ ամեն օր զգացել մեր հինավուրց կուլտուրային Ձեր տված բարձր գնահատականը և Ձեր սերը դեպի նա։

Դուք ավելի լավ, քան որևէ մեկը, գիտեք, թե անցյալում ինչպես ծանր ու անուրախ է եղել կուլտուրայի մարդկանց վիճակը Հայաստանում։ Կիսաքաղց, «իշխանավորների» կողմից արհամարհված՝ նրանք ողորմելի գոյություն են քարշ տվել։ Որքան հայ շնորհալի, տաղանդավոր գիտնականներ են հեռացել կյանքից առանց իրենց մտքերը մինչև վերջը ասելու, առանց այդ մտքերը մինչև վերջը գրի առնելու։

Բռնությունն ու կամայականությունը անհատ գիտնականների տարագիր են արել ամբողջ աշխարհով մեկ։ Հայ գիտնականների տասնյակ սերունդներ դարերի ընթացքում հնարավորություններ չգտնելով գիտությունը զարգացնելու չարատանջ հայրենիքում, ձգտել են գիտական օջախներ ստեղծել օտարության մեջ, որպեսզի պահպանեն իրենց ժողովրդի կուլտուրական ամենահարուստ ժառանգությունը, որպեսզի թույլ չտան, որ մարի գիտական միտքը։

Հարազատ հողում, հարազատ ժողովրդի մեջ գիտական գործունեության հնարավորություն ունենալու մասին հայ գիտնականների շատ սերունդների երազները կենսագործվեցին միմիայն այն իմաստուն, մարդասեր քաղաքականության հաղթանակի դարաշրջանում, որը կոչվում է լենինյան-ստալինյան ազգային քաղաքականություն։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան, հայերին վերջնական կորստից ազատած Սովետական իշխանությունը միայն վերջ դրին հայ ինտելիգենցիայի ողբերգությանը, գիտության մարդկանց տանջանքներին։ Առաջին անգամն է, որ նրանք իրենց ազնիվ կոչմանը արժանի տեղ ստացան հասարակության մեջ, ստացան ամեն ինչ, որպեսզի դրսևորեն ստեղծագործական ուժերը ի բարօրություն ժողովրդի, հանուն կոմունիստական վեհ իդեալների իրականացման։

Թանկագին Իոսիֆ Վիսսարիոնովիչ. մենք ուրախ ենք Ձեզ հաղորդելու, որ մեր վերածնված Սովետական Հայաստանում ստեղծված են այն բոլոր պայմանները, որոնք ամբողջ ինտելիգենցիային, մեզ բոլորիս, թե հներիս՝ սպիտակահեր ծերունիներիս և թե երիտասարդներիս՝ Հոկտեմբերի ծնած գիտնականներիս, համախմբել են մի միասնական ընտանիքի մեջ, որը սերտորեն կապված է բոլշևիկյան պարտիայի հետ, ժողովրդի հետ, որը իրեն ամբողջովին նվիրում է հայրենիքին ծառայելու։

Շնորհիվ այդ ամենօրյա հոգատարությանը և օգնությանը գիտությունը Հայաստանում հասել է այնպիսի նշանակալից հաջողությունների, որոնք պայմանավորել են ռեսպուբլիկայում Գիտությունների Ակադեմիայի ստեղծումը։

Մեր Ակադեմիան ծնվեց ֆաշիստական խավարամոլների գարշելի հրոսակախմբերի դեմ մեր սովետական մեծ Հայրենիքի կողմից մղվող կատաղի գոտեմարտերի ժամանակաշրջանում։ Մեր Ակադեմիան ծնվեց հրետանային

համազարկերի դղրդյունի մեջ։ Գիտության պատմության մեջ այդ նշանավոր փաստը դարձյալ մի նոր ապացույց է մեր Սովետական պետության հզորության և ամրության։

Մենք գիտակցում ենք հայրենիքի հանդեպ մեր մեծ պատասխանատվությունը և սերտորեն միացած սովետական առաջավոր գիտության շտաբի՝ ՍՍՌ Միության Գիտությունների Ակադեմիայի հետ, միացած եղբայրական ռեսպուբլիկաների գիտնականների հետ, կանենք մեր ուժը ներած ամեն բան, որպեսզի էլ ավելի ամրանա ու աճի սովետական գիտությունը, որպեսզի պատվով արդարացնենք սովետական ժողովրդական ինտելիգենցիայի բարձր կոչումը, որի դերն ու նշանակությունը պետության կառուցման մեջ, նրա ամրապնդման ու պաշտպանության մեջ այնպես բարձր եք գնահատել Դուք, Իոսիֆ Վիսսարիոնովիչ։

Մենք ամեն ջանք կգործադրենք, որպեսզի մեր Ակադեմիան, որը իր կյանքի հենց սկզբից սերտորեն կապված է ժողովրդի հետ, աշխատի մեր Սոցիալիստական Հայրենիքի առջև ծառացած խնդիրներին համապատասխան։

Մեր երիտասարդ Ակադեմիան հետևողականորեն կպայքարի առաջավոր թեորիաների ու գաղափարների համար, հիշելով Ձեր խոսքերը ժողովուրդների կյանքի մեջ նրանց ունեցած կազմակերպող, ստեղծագործող դերի մասին։

Թանկագին Իոսիֆ Վիսսարիոնովիչ. մեծ ու անչափ են այն բոլոր հնարավորությունները իր կուլտուրայի զարգացման համար, որ հայկական սովետական ինտելիգենցիան ստացավ։ Եվ մենք պատրաստ ենք գիտական-ստեղծագործ մեծ աշխատանքի։

Նոր խանդավառությամբ ձեռնամուխ լինելով աշխատանքի՝ մենք մեր աչքի առջև ունենք գիտության երկու կորիֆեյների՝ Լենինի և Ձեր կերպարը, Թանկագին Իոսիֆ Վիսսարիոնովիչ, և այդ մեզ համար ոգևորության անսպառ աղբյուր է ծառայում։

Մենք Հայրենիքի տաճարին կնվիրաբերենք մեր բոլոր ուժերն ու շնորհքը, որպեսզի մոտեցնենք ատելի թշնամու դեմ լիակատար և անխուսափելի հաղթանակը, հանուն մեր մեծ ու անպարտելի սովետական Հայրենիքի ծաղկման, որը՝ Ձեր հանճարով ղեկավարվելով համարձակորեն ընդառաջ է գնում իր լուսաշող ապագային։

Փառք մեր մեծ Մարշալին, հերոսական Կարմիր Բանակի հանճարեղ զորավարին։

Փառք առաջավոր գիտության կորիֆեյ ու ոգեշնչող Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինին:

Կեցցե մեր սիրելի բոլշևիկյան պարտիան, Լենինի-Ստալինի պարտիան։

Կեցցե մեր մեծ անպարտելի սոցիալիստական Հայրենիքը:

*Ընդունված է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի բացմանը նվիրված հանդիսավոր նիստում, 1943 թ. նոյեմբերի 29-ին։*

**МОСКВА, КРЕМЛЬ.**

## ВЕЛИКОМУ ВОЖДЮ НАРОДОВ ИОСИФУ ВИССАРИОНОВИЧУ СТАЛИНУ

*Дорогой Иосиф Виссарионович!*

Сегодня в Советской Армении великий праздник. День XXIII годовщины установления советской власти в Армении совпал с открытием Академии наук Армянской Советской Социалистической республики.

Весть об образовании Академии наук Армении встречена армянской интеллигенцией, всем армянским народом с чувством глубокой радости. Создание Академии единодушно расценено народом, как великая честь, оказанная ему, его интеллигенции, его культуре.

Принимая этот великий дар Советского правительства, большевистской партии, армянская интеллигенция обращает свои взоры, первые свои слова к Вам, к великому своему вождю и другу, и Вам приносит свою безмерную благодарность за все, что Вы сделали для спасения и возрождения армянского народа, за все, что Вы делаете для развития его культуры и науки.

И в этот незабываемый день мы, ученые Армении, вся армянская интеллигенция, весь наш народ, с чувством благоговения возвращаемся мыслью к тому, как еще на заре XX столетия Вы стали во главе борьбы за освобождение армянского народа и, с присущей Вам настойчивостью, в течение более четырех десятков лет, оберегая армянский народ, Вы разоблачали политиканов всех мастей, спекулирующих армянской проблемой, на самом же деле толкающих народ под ярмо империалистических хищников.

В этой борьбе Вы расчищали указанный Вами единственный правильный путь, приведший к освобождению и возрождению армянского народа.

Ни один армянин не может забыть тяжелый 1920 год, когда он, обманутый, ограбленный, замученный империалистическими хищниками, находился на грани жизни и смерти. Тогда, в эти роковые дни, Вы дали ключ к спасению, указав, что только советская власть принесет избавление армянскому народу.

Наш дорогой и любимый учитель! Мы знаем, что говоря о физическом спасении армянского народа, Вы озабочены были спасенеим не только его жизни, но и многовековой его культуры. Мы видели всегда неустанную заботу Вашу о росте науки и искусства в Армении,

и за этой заботой мы каждодневно ощущали Вашу высокую оценку нашей древней культуры и Вашу любовь к ней.

Вы лучше, чем кто-либо другой, знаете, как тяжела и безотрадна была в прошлом судьба людей культуры в Армении. Полуголодные, презираемые „власть имущими“, они влачили жалкое существование. Сколько одаренных, талантливых армянских ученых ушло из жизни, не успев досказать свои мысли, не успев их дописать.

Насилие и произвол гнали одиночек ученых по всему земному шару. Десятки поколений армянских ученых, на протяжении веков не находя возможностей развития науки на истерзанной родине, стремились создать научные очаги на чужбине, чтобы сохранить богатейшее культурное наследие своего народа, чтобы не дать угаснуть научной мысли.

Мечты многих поколений армянских ученых о возможности научной деятельности на родной земле, среди родного народа, воплотились в жизнь лишь в эпоху торжества той мудрой, человеколюбивой политики, которая называется ленинско-сталинской национальной политикой.

Лишь Великая Октябрьская Социалистическая революция, советская власть, освободившая армян от окончательной гибели, положили конец трагедии армянской интеллигенции, страданиям людей науки. Впервые они нашли достойное их благородному призванию место в обществе, получили все, чтобы проявить творческие силы на благо народа, во имя осуществления возвышенных коммунистических идеалов.

*Дорогой Иосиф Виссарионович!* Мы рады Вам сообщить, что в нашей возрожденной Советской Армении созданы все условия, сплотившие всю интеллигенцию, всех нас, и старых—убеленных сединой, и молодых—рожденных Октябрем ученых, в единую семью, тесно связанную с большевистской партией, с народом, полностью отдающую себя служению родине.

Благодаря этой повседневной заботе и помощи, наука в Армении достигла значительных успехов, обусловивших создание Академии наук в республике.

Наша Академия родилась в период ожесточенных схваток нашей великой Советской родины с омерзительными полчищами фашистских мракобесов. Наша Академия родилась под грохот артиллерийских залпов. Этот знаменательный факт в истории науки является еще одним лишним доказательством могущества и прочности нашего Советского государства.

Мы сознаем нашу великую ответственность перед родиной и, в тесном единении со штабом передовой советской науки—Академией наук Союза ССР, в единении с учеными братских республик, сделаем все, что в наших силах, чтобы еще больше крепла и росла советская наука, чтобы с честью оправдать высокое призвание советской—народной интеллигенции, роль и значение которой в построении госу-

дарства, в его укреплении и обороне так высоко оценена Вами, *Иосиф Виссарионович!*

Мы приложим все усилия, чтобы наша Академия, с самого начала своей жизни тесно связанная с народом, работала в соответствии с задачами, стоящими перед нашей социалистической родиной.

Наша молодая Академия будет последовательно бороться за передовые теории и идеи, памятуя Ваши слова об их организующей, творческой роли в жизни народов.

*Дорогой Иосиф Виссарионович!* Велики и неизмеримы все те возможности для развития своей культуры, которая получила армянская советская интеллигенция. И мы готовы к большому научно-созидательному труду.

С новым энтузиазмом принимаясь за работу, мы имеем перед глазами облик двух корифеев науки—*Ленина и Ваш, дорогой Иосиф Виссарионович*, и это служит нам неиссякаемым источником вдохновения.

Мы принесем на алтарь родины все наши силы и дарования для приближения полной и неизбежной победы над ненавистным врагом, за процветание нашей великой и непобедимой Советской родины, которая, руководимая Вашим гением, смело идет навстречу своей лучезарной будущности.

Слава нашему великому Маршалу, гениальному полководцу героической Красной Армии!

Слава корифею и вдохновителю передовой науки *Иосифу Виссарионовичу Сталину!*

Да здравствует наша любимая большевистская партия, партия *Ленина—Сталина!*

Да здравствует наша великая, непобедимая социалистическая Родина!

Принято на торжественном заседании, посвященном открытию Академии наук Армянской ССР, 29 ноября 1943 г.